ЗАО
"ГОСУДАРСТВЕННАЯ ВНЕВЕДОМСТВЕННАЯ ЭКСПЕРТИЗА ПРОЕКТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

"THE STATE NON DEPARTMENTAL EXPERT COMMISSION FOR CONSTRUCTION DESIGNS OF REPUBLIC OF ARMENIA " CJSC

0078 Ереван, Комитаса 54б | 0078 Երևան , Կոմիտաս 54բ ☎ 57 54 31 | St.Komitas 54b, Yerevan

12.02.2020 № 17կ/2020

"Թունել Սադ Արիանա" ՓԲԸ
նախագծի ղեկավար՝
պ-ն Բ.Իռանֆյանին

ՀՀ նախագծերի պետփորձաքննությունը կրկին դիտարկելով "Բագրատաշենի կամրջի նախագծում և կառուցում" համալիր նախագիծը հայտնում է :

Նախկինում նշված համալիր նախագծի առանձին բաժինների մշակումները դիտարկվել են փորձաքննության կողմից և տրվել են համապատասխան եզրակացություններ՝

- 7/ՊՓ-207Փ առ 16.09.2019թ. – դրական եզրակացություն "Ուսումնասիրություններ և հետազոտություններ (տեղագրական, փրաերկրաբանական, երկրաբանական և երկրաբանատեխնիկական, ջրաբանական հետազոտություններ)" բաժնի վերաբերյալ,
- 7/ՊՓ-331Փ առ 09.12.2019թ. – համալիր նախագծի կազմով մշակումները վերադարձվել են լրացման, լրամշակման և հիմնավորման քաղ եղած դիտողությունների և առաջարկությունների,
- Փորձաքննության դիտողությունները և առաջարկությունները մի քանի անգամ քննարկվել են նախագծային կազմակերպության հեղինակային խմբի մասնագետների հետ ինչպես մեր տարածքում, այնպես էլ համացանցի միջոցով,
- Դրա արդյունքում ներկայացվել են անհրաժեշտ համաձայնեցումները, հիմնավորումները, լրացումները նաև լրամշակումները, որոնց վերլուծությունը ներկայացվում է սույն գրության կցված հավելված 1-ում:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, ՀՀ նախագծերի պետփորձաքննությունը երաշխավորում է "Բագրատաշենի կամրջի նախագծում և կառուցում" համալիր նախագծի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, նախագծման առաջադրանքի սահմանումներին և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Առդիր՝ եզրակացությունը 6 էջից:

Գործադիր տնօրեն Գ.Մրշյան